Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել. Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ հետևյալ հղմամբ:

Բանկին ի սեփականություն անցած շարժական գույքի ձեռքբերման վարկերի տրամադրման պայմաններ

Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր
Վարկի արժույթ	**ՀՀ դրամ**
Վարկի նպատակ	Բանկի սեփականությունը հանդիսացող շարժական գույքի ձեռքբերում
Տարեկան տոկոսադրույք	12%՝ ձեռքբերվող գույքի և անշարժ գույքի գրավի դեպքում 13%՝ միայն ձեռքբերվող գույքի գրավադրման և ֆինանսական վերլուծության դեպքում 14%՝ միայն ձեռքբերվող գույքի գրավադրման դեպքում
Տարեկան փաստացի տոկոսադրույք	12.2% - 19.2%
Տոկոսադրույքի տեսակը	Հաստատուն
Առավելագույն ժամկետ	60 ամիս
Նվազագույն ժամկետ	12 ամիս
Վարկի նվազագույն գումար	5 000 000 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումար	150 000 000 ՀՀ դրամ
Նվազագույն կանխավճար	0%՝ ձեռքբերվող գույքի և անշարժ գույքի գրավի դեպքում 15%՝ միայն ձեռքբերվող գույքի գրավադրման և ֆինանսական վերլուծության դեպքում 30%՝ միայն ձեռքբերվող գույքի գրավադրման դեպքում
Վարկի և տոկոսագումարի մարումներ	1. Վարկի և տոկոսագումարի հանրագումարի ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետ) կամ 2. Մայր գումարի անհատական մարման գրաֆիկ - Տոկոսագումարներ՝ ամենամսյա, մայր գումարի մարումները՝ մեկ տարվա ընթացքում ոչ պակաս քան մայր գումարի 10%-ի չափով ** ** *Կիրառելի է միայն իրավաբանական անձ հաճախորդների համար*
Վարկի տրամադրման եղանակ	Միանվագ անկանխիկ՝ Բանկում վարկառուի անվամբ բացված բանկային հաշվին փոխանցման միջոցով
Երրորդ անձանց կատարվող վճարումներ	Վարկառուն վճարում է գույքի գնահատման, գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի ստացման, գրավի պայմանագրերի նոտարական վավերացման համար, որն ընդհանուր արժեքով կարող է կազմել 40,000 ՀՀ դրամից 50,000 ՀՀ դրամ
	Անշարժ գույքի գրավադրման կադաստրային գրանցման հետ կապված ծախսերը կրում է Բանկը, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի գրավի իրավունքը հաճախորդը ցանկանում է գրանցել օրենքով նախատեսված ստանդարտ ժամկետից արագացված կարգով
Վարկային հայտի ուսումնասիրության վճար	5 000 ՀՀ դրամ
**Գրավի ձևակերպման վճար **	2000 ՀՀ դրամ՝ միայն ձեռքբերվող շարժական գույքի գրավադրման դեպքում

	73 200ՀՀ դրամ՝ ձեռքբերվող շարժական և անշարժ գույքի գրավադրման դեպքում
Քաղվածքների տրամադրում	Անվճար՝ մինչև 1 ամիս կտրվածքով քաղվածք, Անվճար՝ տարեկան առնվազն չորս անգամ, վարկառուի պահանջով՝ վերջինիս կողմից նշված ժամանակահատվածի համար, 1000-5000 ՀՀ դրամ՝ այլ ժամանակահատվածով քաղվածքներ և տեղեկանքներ (տես՝ https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ/):
Տույժեր, տուգանքներ	
Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում	24% տարեկան՝ ժամկետանց վարկի նկատմամբ
Ժամկետանց տոկոսագումարի դիմաց տույժ	48% տարեկան
Վարկառուին ներկայացվող պահանջներ	
Վարկառուի տարիքային սահմանափակում	1. 21 տարին լրացած ֆիզիկական անձ կամ, 2. Ձեռնարկատիրական, այդ թվում՝ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձ կամ Ա/Ձ
Վարկի ապահովվածությանը ներկայացվող պահանջներ և պայմաններ	
Վարկի ապահովվածություն	1.Ձեռքբերվող շարժական գույք կամ ձեռքբերվող շարժական գույք և անշարժ գույք և, 2. Իրավաբանական անձի դեպքում՝ 20% և ավել ֆիզիկական անձ բաժնետերերի (փայատերերի) երաշխավորություն և, 3. Իրավաբանական անձի կամ Ա/Ձ դեպքում՝ Բանկում սպասարկվող Հաճախորդի հաշիվներով շրջանառվող դրամական միջոցներ և դրանց նկատմամբ պահանջի իրավունք՝ առանց արգելադրման կիրառման
Վարկ/Գրավ հարաբերակցություն	70-100%
Որոշման կայացման ժամկետներ, գործոններ	
Որոշման կայացման և տեղեկացման ժամկետ	1.Միայն ձեռքբերվող շարժական գույքի գրավով վարկերի դեպքում պահանջվող փաստաթղթերը ներկայացված լինելուց հետո 5 աշխատանքային օր
	2.Ձեռքբերվող շարժական գույքի և այլ անշարժ գույքի գրավով վարկերի դեպքում պահանջվող փաստաթղթերը ներկայացված լինելուց հետո 7 աշխատանքային օր
Որոշման վավերականության ժամկետ	25 աշխատանքային օր
Դրական որոշման գործոններ	վարկառուի, առկայության դեպքում գրավատուի համապատասխանությունը ներկայացվող պահանջներին
Վարկի մերժման գործոններ	վարկառուի, առկայության դեպքում գրավատուի անհամապատասխանությունը ներկայացվող պահանջներին
Վարկը տրամադրելու ժամկետ	Գրավի պայմանագիրը վավերացում (այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում նոտարական) և գրավը (այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում կադաստրային) գրանցում ստանալուց հետո 1 աշխատանքային օր
** Գրավի ձևակերպման վճարը գանձվում է մինչև պայմանագրերի ստորագրումը: Գույք(եր)ի գծով կադաստրային (պետական) գրանցումները կատարվում են միայն ստանդարտ ժամկետով (ոչ արագացված կարգով):	

Կարևոր է իմանալ

ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐԵԼ (ՄԱՐԵԼ) ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ԿՆՎԱՋԵՑՎԻ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ, ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԿՆՎԱՋԵՑՎԻ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ. ՏՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԻՑ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԸ: ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ՍՈՒՅՆ ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԻՐԱՌԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:

Վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վարկառուն կարող է զրկվել գրավադրվող գույքի նկատմամբ իր իրավունքներից:
Գրավի հաշվին վարկային պարտավորությունների ամբողջական չմարման դեպքում պարտավորությունների ամբողջական մարումը կկատարվի վարկառուի և գրավատուների այլ միջոցների և գույքերի հաշվին:

Ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝ սահմանված կարգով գրավադրված գույքի բռնագանձման հետ կապված Բանկի կողմից կատարված ծախսերը և վարկային պայմանագրերի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի և/կամ Համավարկառուի այլ դեբիտորական պարտավորությունները,ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումար, ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումար, ժամկետանց Վարկի գումարը, վարկի սպասարկման վճարը, Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային տոկոսագումարը, Վարկի գումարը:
Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց Վարկառուին և/կամ Համավարկառուին տեղեկացնելու:

Գրավի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով: Բնակարանի նկատմամբ հիփոթեքի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե վարկավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում վարկառուն պարտավոր է վարկի գումարը օգտագործելու համար Բանկին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են վարկավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Վարկավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում վարկառուից Բանկը չի կարող պահանջել:

Վարկային միջոցները ենթակա չեն կանխիկացման:

Սույն պայմանների հիման վրա վարկավորում իրականացնելը Բանկի իրավունքն է: Բանկն իրավունք ունի վարկավորում իրականացնել սույն պայմաններից տարբերվող պայմաններով:

Բանկի ՄՈԲԱՅԼ ԲԱՆԿԻՆԳ հավելվածի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, կատարել վարկի մարումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ https://www.ardshinbank.am/content/մոբայլ-բանկինգ հղմամբ:

Վարկառուն վճարում է գույքի գնահատման, գույքի նկատմամբ սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի ստացման, գրավի պայմանագրի նոտարական վավերացման համար

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել Բանկի պաշտոնական www.ardshinbank.am կայքէջում:

Գրավադրվող անշարժ գույքի գնահատումն իրականացվում է բացառապես Բանկի հետ համագործակցող անկախ ընկերությունների կողմից: *Ստորև գնահատող կազմակերպությունների ցանկը*			
Կազմակերպություն	Հասցե / կայքէջ	Հեռախոսահամար	Էլ. հասցե / հաշվեհամար
«Ալտա Վիպ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 16 թիվ 2, www.altavip.am	010530709, 010500407	info@altavip.am հ/հ 2470100270080000
«Օրրան» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 2ա, www.orranv.am	010520452, 098204898, 091750809	orranv@mail.ru հ/հ 2470103446760000
«Օֆման Մորգիդջ Քոնսալթինգ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Եզ. Կողբացի 42-37,	010537179, 099537174, 077708057	ofmanmc@mail.ru հ/հ 2474401231870000
«Վի էմ-ԱՐ Փի» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց, փակուղի 8, 209 սենյակ,	010588797, 043588797	vm-rp@mail.ru հ/հ 2470103730630000
«ՕԼԻՎԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 8շ 224 ս.	094542770, 091542770, 010542770	info@olivergroup.am հ/հ 2470067284370000
«Ֆինլոու» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 50-3 տ.	010506000, 091911155, 060747400	finlaw@inbox.ru հ/հ 2474602078940000
«Ինէքսս» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան,Նար-Դոսի 28; ք. Վանաձոր,Թամանցիների 14	041/096-04 22 87, 077-51 81 16	apresyan.expert@mail.ru հ/հ 247170789348000

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: